Հայտարարվում է մրցույթ Շիրակի մարզի «Աղինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզու առարկայի քսաներեք(23)դասաժամ ,կենսաբանություն առարկայի տաս(10)դասաժամ ուսուցչի թափուր տեղի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

Դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

Անձը հաստատող փաստաթուղթ

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

Ինքնակենսագրություն (Ձեւ 5), - այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև եւ զինվորական գրքույկ,

Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 6-ից մինչեւ սեպտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00- ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 22-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Շիրակի մարզի Աղինի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Շիրակի մարզ,Անի համայնք, գ. Աղին, փող. 5, շենք 25: Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 59 35 05 հեռախոսահամարով